ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

unicef
յուրաքանչյուր երեխայի համար

75

Գործնական որհուրդներ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ, ՈՎՔԵՐ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ԵՆ ԽՈՍՔԻ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ

Խոսքի կամ հաղորդակցման խանգարումներ ունեցող երեխաները, ինչպես և բոլորը, ԿԱՐՈՂ ԵՆ ՍՈՎՈՐԵԼ, իսկ դասավանդել նրանց նշանակում է **օգնել նրանց հասնել իրենց ամենամեծ ներուժին:**

Շնորհակալություն Ձեզ այս մեծ մարտահրա-վերն ընդունելու պատրաստակամության համար:

1. ԴԱՍԱՐԱՆ

Դպրոցում սովորողները պետք է լսեն, բանավոր և գրավոր արտահայտեն իրենց կարծիքը, հաղոր-դակցվեն իրենց դասընկերների և մանկավարժների հետ: Հաղորդակցումը անհրաժեշտություն է դասա-րանում: Պատկերացրեք, թե ինչ խոչընդոտների և դժվարությունների է հանդիպում սովորողը, որը չի կարողանում իրականացնել վերը նշվածներից որևէ մեկը:

Դասարանում ստեղծեք դրական մթնոլորտ: Սովորողի մոտ ձևավորեք դասարանական գործողություններին և քննարկումներին մասնակ-ցելու դրական մոտիվացիա: Ստեղծեք ընդունող և հասկացող մթնոլորտ: Համոզված եղեք, որ սովորողը տվյալ պահին ցանկանում է արտահայտել իր մտքերը կամ հարգեք լռելու իրավունքը, եթե երեխան չի ցանկանում պատասխանել: Հենվեք սովորողի ուժեղ կողմերի վրա:



2. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Սովորողը պետք է իմանա, որ իր խոսքային կամ լեզվական դժվարությունը, օրինակ՝ կակազելը, Ձեզ համար խնդիր չէ, և Դուք ընդունում եք նրան ինչպես ցանկացած այլ սովորողի: Երեխային դիմեք անունով և համոզված եղեք, որ գտնվում եք նրա ուշադրության կենտրոնում: Վստահ եղեք, որ սովորողը դասարանում իրեն արժևորված է զգում:

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:

AACEP

Երկխոսության մեջ առաջատար դեր և բավարար ժամանակ հատկացրեք սովորողին, որպեսզի նա կարողանա արձագանքել Ձեր հրահանգներին: Ցույց տվեք, որ ուշադիր լսում եք նրան: Եղեք համբերատար, երբ սովորողը խոսում է, քանի որ շտապելը կարող է հանգեցնել հիասթափության:

3. ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ

Դասապրոցեսի ընթացքում կիրառեք համագործակցային մոտեցումներ: Երբեմն կարելի է դասարանը բաժանել փոքր խմբերի կամ զույգերի, որպեսզի երեխաները կարողանան միմյանց աջակցել: Ստեղծեք այնպիսի իրավիճակ, որ սովորողը «ստիպված կլինի» օգնություն խնդրել, հարցեր տալ, խոսել: Նոր նյութի հաղորդման և գործնական աշխատանքների ժամանակ հաշվի առեք սովորողի հաղորդակցման և շփման նախասիրությունները:

4. ՈՍԿԵ ԿԱՆՈՆՆԵՐ

Նոր գաղափարների կամ երևույթների մասին խոսելիս օգտագործեք սովորողին ծանոթ բառապաշար և նախադասությունների կառուցվածք: Խոսեք ոչ շատ արագ, պարզ, հստակ, հասկանալի և ընդգծված արտասանությամբ: Հաճախ կարելի է կրկնել առաջադրանքը՝ ուղեկցելով այն ժեստերով և դիմախաղով: Սովորողի համար եղեք ճիշտ խոսքի մոդել:

Խուսափեք սովորողին ավելորդ բառերով կամ տեղեկատվությամբ ծանրաբեռնելուց, ինչպես նաև խոսքի մեջ բացասական և վերացական գաղա-փարներ օգտագործելուց: Հրահանգները բաժանեք առանձին մասերի, խոսքն ուղեկցեք ժեստերով, նշաններով և դիմախաղով, իսկ նոր նյութը մատուցեք հնարավորինս տեսանելի, տակտիլ և լսելի (նկարներ, գծապատկերներ, ձայնագրու-թյուններ, տեսանյութեր, դիագրամներ և այլն):

Քննությունների ժամանակ թեստային առաջադրանքները նրա համար կարդացեք բարձրաձայն, իսկ անհրաժեշտության դեպքում ապահովեք հանգիստ սենյակ:

5. ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

Համոզվեք, որ ուսանողն ունի իր ցանկություններն ու կարիքները պատշաճ կերպով արտահայտելու միջոց: Դասասենյակը հարստացրեք դպրոցական ծրագրային նյութերի տեսաձայնադարանով, նկարներով, տակտիլ նյութերով, պաստառներով և զանազան այլ դիդակտիկայով: Իսկ այլընտրանքային լրացուցիչ հաղորդակցման միջոցների (ԱԼՀ) կիրառումը կարող է նպաստել ոչ միայն սովորողի բանավոր խոսքի ձևավորմանն ու զարգացմանը, այլև, որպես հաղորդակցման միակ հնարավոր տարբերակ՝ ուղղորդել սովորողին ողջ կյանքի ընթացքում:

6. ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Սա աշխատանք է միայն նվիրյալների համար: Մենք շնորհակալություն ենք հայտնում Ձեզ՝ Ձեր աջակցության և լրացուցիչ աշխատանքի համար:

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները: